Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Բ. Դեմիրխանյանի գործուղման արդյունքների մասին

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

  Բորիս Դեմիրխանյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Կորեայի Հանրապետություն (ք. Սեուլ), 2017թ. դեկտեմբերի 6-ից 8-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

  Ազգային տեղեկատվական հասարակական գործակալություն

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ**

  Մասնակցություն 2017 ՏՀՏ ղեկավարների համաժողովին

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

2017 ՏՀՏ ղեկավարների ամենամյա համաժողովին իրենց մասնակցություն են ցուցաբերել Հայաստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Կամբոջայի, Մյանմայի, Ինդոնեզիայի, Վիետնամի, Ֆիլիպպինների, Մոնգոլիայի, Նեպալի, Բանգլադեշի, Շրի Լանկայի և Պակիստանի բարձրաստիճան ներկայացուցիչները:

Միջոցառումը հնարավորություն ընձեռեց տարբեր երկրներից ժամանած նախարարներին և փոխնախարարներին ծանոթանալ և փորձարկել նոր տեխնոլոգիաները, ինչպիսիք են՝ IoT, 5G, AI, VR և UHD:

Միջոցառման շրջանակներում քննարկվել են արդյունաբերական հեղափոխությունում ՏՀՏ-ի դերի, լայնաշերտ կապի զարգացման քաղաքականության և բարելավման, թվային տնտեսության քաղաքականության և ընթացիկ խնդիրների վերաբերյալ հարցեր: Տեղի ունեցան քննարկումներ խելացի քաղաք, կայուն թվային ապագայի կառուցում, 5G հնարավորություն, տվյալների պահոց և այլ թեմաների շուրջ:

Կորեայի Հանրապետության ներկայացուցիչը ներկայացրեց թվային փոփոխությունները և հիմնական պլանները առաջիկա մեկ տարվա համար:

Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը առաջին անգամ ներկայացրեց թվային զարգացման հայեցակարգը: Քննարկվեցին համագործակցության, ընդհանուր գաղափարների, լավագույն փորձի բացահայտման և փոխանակման հնարավորությունները:

Միջոցառման շրջանակներում նախարարի տեղակալ Բորիս Դեմիրխանյանը ունեցել է մի շարք երկկողմ հանդիպումներ՝

1. Ազգային տեղեկատվական հասարակական գործակալության նախագահ պարոն Սու Բյունգ-ջոյի հետ: Քննարկվել են հետևյալ հիմնական ուղղությունները՝

- կրթական ծրագրեր բուհերի մակարդակով. ծրագրերը հիմնականում իրականացվում եմ Ասիական այնպիսի երկրներում ինչպիսիք են՝ Ինդոնեզիան, Մալազիան և այլն, այնուամենայնիվ առաջարկվեց Հայաստանը դիտարկել, որպես այդ ծրագրերը իրականացման հնարավոր երկիր:
- կիբեռանվտանգության կենտրոնի խնդիրներ. կարևորվեց կիբեռանվտանգության համատեղ կենտրոնի ստեղծումը՝ միասնական աշխատանքների իրականացման նպատակով:

2. «Կորեյա տելեկոմ» գործադիր տնօրեն պարոն Իլիվան Պարկի հետ: Քննարկվել են հետևյալ հիմնական ուղղությունները՝

- Տվյալների պահոցի ստեղծում. Առաջարկվեց ծրագիրը իրականացնել համատեղ պետական-մասնավոր շրջանակներում:
- Լուսավորման կառավարման փորձ. Բորիս Դեմիրխանյանը նշեց, որ եթե Հայաստանում լուսավորման կառավարման մոդելը գործի, ապա ահրաժեշտություն կառաջանա համագործակցելու և Հայաստանում կորեյական փորձի ներդրման մեջ:
- Երկու երկրների միջև կապի և համագործակցության ամրապնդման նպատակով՝ կողմերը կարևորեցին նաև ռոումինգային ծառայության սակագնի իջեցումը:

Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Բորիս Դեմիրխանյանը հանդիպում է ունեցել նաև Կամբոջայի Փոստի և հեռահաղորդակցության նախարար պարոն Թրամ IV Տեկի հետ, որի արդյունքում ստորագրվեց փոխընբռնման հուշագիր, որպես ՏՀՏ բնագավառում համագործակցության առաջին քայլ:

Միջոցառման ավարտին Բ.Դեմիրխանյանը առաջարկեց Կորեայի Հանրապետության գործընկերներին այցելել քաղաք Երևան՝ առավել մանրամասն քննարկումների իրականացման նպատակով, ինչը Կողմերը սիրով ընդունեցին:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ՝ **Բորիս Դեմիրխանյան**

12.12.2017թ.